ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը ծնվել է 1951 թվականին, Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի հանրակրթական դպրոցում եւ ապա ընդունվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարան՝ գերազանց առաջադիմությամբ այն ավարտելով 1971-ին:

Արբազան Հայրը 1970 թ. Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգեւոր ճեմարանն ավարտելուց հետո, մեկ տարի պաշտոնավարել է նույն հարկի տակ որպես վերակացու՝ միաժամանակ դասավանդելով Նոր Կտակարան:

1972 թ. հոկտեմբերին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ 1972 թ. մեկնել է Վիեննա (Ավստրիա)՝ ուսանելու տեղի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում, ուր եւ մնացել է մինչեւ 1975 թ.:

1975 թ., դարձյալ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Գարեգին Արբազանը, հայոց հոգեւոր հովվի պարտականություններով, ծառայության է մեկնել Գերմանիա՝ համաժամանակյա իր աստվածաբանական գիտելիքները խորացնելով Բոնների համալսարանում:

Գերմանիայում մնալով չորս տարի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է վերադարձել 1979-ին եւ նույն տարում էլ մեկնել Զագորսկ՝ ուսանելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հոգեւոր Ակադեմիայի ասպիրանտուրայում:

1980 թ. նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական, իսկ երեք տարի անց, 1983 թ. ապրիլին, Հայրապետական կոնդակով նշանակվել նույն թեմի առաջնորդական փոխանորդ:

1983 թ. հոկտեմբերի 23-ին, Մայր Տաճարում, ձեռամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: Արքության պատվի է արժանացել 1992 թ. նոյեմբերին:

Առաջնորդ Արբազանի անմիջական նախաձեռնությամբ 1989 թ. Սեւանում կյանքի է կոչվել Վազգենյան հոգեւոր դպրանոցը, ուր հոգեւոր կրթություն են ստանում Հայ Եկեղեցու ապագա սպասավորները:

Արբազան Հոր նախաձեռնությամբ Երեւանի երեք պիոներպալատները վերափոխվել են հայորդյաց տների, ուր իրենց հոգեւոր կրթությունն ու գեղագիտական դաստիարակությունն են ստանում բազում դպրոցականներ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության անդամ է: Ունի երկու եղբայր եւ երեք քույր:

Արբազան Հայրը Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ է:

1998 թ. նոյեմբերի 30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ